ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ապրիլի 2022թ. N 96-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 1,17578 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող Գնդեվազ գյուղում գտնվող 1,17578 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասը, հողատեսքը՝ արոտավայր, ճանաչել որպես առանձին գույքային միավոր և ներկայացնել իրավունքի պետական գրանցման:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ Կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 ապրիլի 14
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ապրիլի 2022թ. N 97-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,52412 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող Գնդեվազ գյուղում գտնվող 0,52412 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասը, հողատեսքը՝ արոտավայր, ճանաչել որպես առանձին գույքային միավոր և ներկայացնել իրավունքի պետական գրանցման:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ Կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 ապրիլի 14
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ապրիլի 2022թ. N 98-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂԻ 2/4-ՐԴ ՓՈՂՈՑԻ N 4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ, ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԼՎԱՐԴ, ՆԱՌԱ, ՆԱԻՐՈՒՀԻ ԵՎ ԶԻՆԱԻԴԱ ՄԿՐՏՉՅԱՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի պահանջներով՝ հիմք ընդունելով ՀՀ «Վայոց ձորի մարզ» նոտարական տարածքի նոտար Ս. Ստեփանյանի կողմից 30.09.2020 թ. տրված Ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը և Ջերմուկ համայնքի բնակիչ Նաիրուհի Գերասիմի Մկրտչյանի դիմումը (մտից N 598, 15.04.2022 թ.) **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ճանաչել Ալվարդ Վարազդատի Մկրտչյանի (ծնված՝ 01.04.1956 թ.), Նառա (ծնված՝ 20.02.1982թ.), Նաիրուհի (ծնված՝ 09.08.1984 թ.) և Զինաիդա (ծնված՝ 24.10.1977 թ.) Գերասիմի Մկրտչյանների սեփականության իրավունքը Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի 2/4-րդ փողոցի N 4 հասցեում գտնվող բնակելի տան՝ հարակից օժանդակ շինություններով, և այն սպասարկող հողամասի նկատմամբ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված բնակելի տունը և օժանդակ շինությունները կառուցված են ընտանիքին սեփականաշնորհված 0,47 հա մակերեսով 10-016-0023-0012 կադաստրային ծածկագրով հողամասի վրա (փաստացի չափագրումով՝ 0,48365 հա):

2. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի տունը և օժանդակ շինությունները, ընդհանուր մակերեսը՝ 448,85 քմ, կառուցվել են 1952-1983 թվականնե-րին, դրանք կառուցված չեն և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսրքի 60-դ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանս-պորտային օբյեկտների օտարման գոտում, շինությունների պահպանումը չի հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ, միաժամանակ՝ փաստացի ավել չափագրված հողամասը ընտանիքին սեփականաշնորհված ընդհանուր հողաբաժնի չափի գերազանցում չի արձանագրում:

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ Կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից՝ հիմք ընդունելով սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի չափագրման փաստացի արդյունքները՝ ըստ Ա/Ձ Անդրանիկ Ներսիսյանի կողմից 24.07.2020 թ. տրված հողամասի, շինությունների հատակագծերի և շինությունների բնութագրի:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ալվարդ, Նառա, Նաիրուհի և Զինաիդա Մկրտչյաններին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2022 ապրիլի 15
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ապրիլի 2022թ. N 99-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԺՈՐԱ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշման, Ջերմուկի համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 11-ի N 5-Ն որոշման, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Ժորա Ստեփանյանի հայտը (մտից՝ N 5, 2022 թվականի հունվարի 4).

ո ր ո շ ու մ եմ՝

1. Ժորա Ստեփանյանին 2022 թվականի ընթացքում տալ Ջերմուկ համայնքի Կեչուտ գյուղում գտնվող խանութում ոգելից, ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 48):

2. Ժորա Ստեփանյանին պարտավորեցնել Ջերմուկի համայնքապետարանի 900365031336 և 900365031351 հաշվեհամարներին վճարելու տեղական տուրք՝ 3900-ական (երեք հազար իննը հարյուրական) դրամ յուրաքանչյուր եռամսյակի համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ժորա Ստեփանյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից և ուժի մեջ է սույն որոշման 2-րդ կետում նշված տեղական տուրքը վճարած լինելու հանգամանքով պայմանավորված:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

25.04.2022թ.
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ապրիլի 2022թ. N 100-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԳԱԳԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏԱՐԱԾՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան՝ հաշվի առնելով Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի բնակիչ Գագիկ Խաչատրյանի դիմումը (մտից՝ N 659, 26.04.2022 թ.) **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքում գտնվող հասարակական նշանակության տարածքին նախկինում տրված հասցեի՝ ք. Ջերմուկ, Ձախափնյակ 17/54 բացվածք, ճշտման նպատակով այն վերահասցեավորել՝

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Ազատամարտիկների փողոց N 17/54 տարածք:

2. Սույն որոշումը ենթակա է գրացման ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2022 ապրիլի 26
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ապրիլի 2022թ. N 101-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-Ի N 98-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով և հիմք ընդունելով ՀՀ Կադաստրի կոմիտեի 2022 թվականի ապրիլի 18-ի Գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին N 18042022-10-0042 որոշումը և Ջերմուկ համայնքի բնակիչ Նաիրուհի Մկրտչյանի դիմումը (մտից N 661, 26.04.2022 թ.)՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2022 թվականի ապրիլի 15-ի «Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի 2/4-րդ փողոցի N 4 հասցեում գտնվող հողամասի, բնակելի տան և օժանդակ շինությունների նկատմամբ Ալվարդ, Նառա, Նաիրուհի և Զինաիդա Մկրտչյանների սեփականության իրավունքը ճանաչելու մասին» N 98-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

ա. որոշման վերնագրում և տեքստում «Նառա» բառը փոխարինել «Նարա» բառով,

բ. որոշման 1-ին կետում «0,47» թիվը փոխարինել «0,1087» թվով, իսկ «0,48365» թիվը փոխարինել «0,1087» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 ապրիլի 27
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ապրիլի 2022թ. N 102-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՁԱԽԱՓՆՅԱԿ ԹԱՂԱՄԱՍ 4-ՐԴ ՓՈՂՈՑԻ N 4/4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիման վրա և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածին համապատասխան, հիմք ընդունելով հողամասն աճուրդով վաճառելու մասին Ջերմուկի համայնքապետարանի՝ համայնքի տարածքում հողերի օտարման աճուրդային հանձնաժողովի 2022 թվականի ապրիլի 29-ի N 2 արձանագրությունը՝ **ո ր ո շ ու մ ե մ՝**

1. Հաստատել հասարակական կառուցապատման նպատակով 2022 թվականի ապրիլի 29-ին կայացած Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամաս 4-րդ փողոց N 4/4 հասցեում գտնվող 10-002-0031-0229 կադաստրային ծածկագրով հողամասի, մակերեսը՝ 130,6 (հարյուր երեսուն ամբողջ վեց տասնորդական) քմ, օտարման աճուրդի արդյունքները և հիմք ընդունելով հողամասն աճուրդով վաճառելու մասին Ջերմուկի համայնքապետարանի՝ համայնքի տարածքում հողերի օտարման աճուրդային հանձնաժողովի 2021 թվականի ապրիլի 29-ի N 2 արձանագրությունը՝ N 1 լոտով աճուրդի հանված 10-002-0031-0229 կադաստրային ծածկագրով հողամասը 380 000 (երեք հարյուր ութսուն հազար) դրամով վաճառել աճուրդի միակ մասնակից, գնորդ ***Նաիրի Ալբերտի Իսախանյանին***:

2. Սույն որոշման առաջին կետում նշված գումարի վճարման հաշվեհամարն է՝ 900365031625:

3. ***Նաիրի Ալբերտի Իսախանյանի*** հետ օրենքով սահմանված կարգով կնքել սույն որոշման առաջին կետում նշված հողամասի առուվաճառքի պայմանագիր:

4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի ստորաբաժանման կողմից:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 ապրիլի 29
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 մայիսի 2022թ. N 103-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵՉՈՒՏ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան՝ հաշվի առնելով Ջերմուկ համայնքի Կեչուտ գյուղի նախկին բնակիչ, ներկայումս հանգուցյալ Մակեդոն Բագրատյանի իրավահաջորդ Սլավիկ Բագրատյանի դիմումը (մտից՝ N 679, 29.04.2022 թ.) **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի Կեչուտ գյուղում գտնվող բնակարանին նախկինում տրված հասցեի՝ գյուղ Կեչուտ, 3-րդ փողոց, N 5 շենքի թիվ 00 բնակարան, ճշտման նպատակով այն վերահասցեավորել՝

Ջերմուկ համայնք, գ. Կեչուտ, 6-րդ փողոց, 9-րդ շենք, N 5 բնակարան:

2. Սույն որոշումը ենթակա է գրացման ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2022 մայիսի 2
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 մայիսի 2022թ. N 104-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՁԱԽԱՓՆՅԱԿ ԹԱՂԱՄԱՍԻ 4-ՐԴ ՓՈՂՈՑԻ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔԻ N 5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-225-Ն) 7-րդ հոդվածի 8-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման, հաշվի առնելով Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի բնակիչ Մարտին Խաչատուրի Բաբաջանյանի դիմումները (մտից N 88՝ 25.01.2021 թ. և N 715՝ 05.05.2022 թ.) **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2022 թվականի ապրիլի 28-ի N 28042022-10-0021 վկայական) Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 4-րդ փողոցի 1-ին նրբանցքի N 5 հասցեում գտնվող 41,3 քառակուսի մետր ներքին մակերեսով ավտոտնակը (արտաքին մակերեսը՝ 47,9 քմ) և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 47,9 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած Գնդեվազ գյուղի բնակիչ Մարտին Խաչատուրի Բաբաջանյանին:
2. Ընդունել ի գիտություն, որ՝

1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.
   1) ավտոտնակի 1 քառակուսի մետրի համար՝ 1100 (հազար հարյուր) դրամ (տարածագնահատման 11-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0.11).
   2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 810 (ութ հարյուր տաս) դրամ:
4. Մարտին Խաչատուրի Բաբաջանյանը պարտավոր է վճարել.
   1) համայնքապետարանի 900365031278 հաշվեհամարին՝52 700 (հիսուներկու հազար յոթ հարյուր) դրամ՝ ավտոտնակի գինը.
   2) համայնքապետարանի 900365031625 հաշվեհամարին՝38800 (երեսունութ հազար ութ հարյուր) դրամ՝ հողամասի գինը:

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Մարտին Խաչատուրի Բաբաջանյանի կողմից:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մարտին Խաչատուրի Բաբաջանյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 մայիսի 5
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 մայիսի 2022թ. N 105-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՁԱԽԱՓՆՅԱԿ ԹԱՂԱՄԱՍԻ 15-ՐԴ ՓՈՂՈՑԻ N 15 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-225-Ն) 7-րդ հոդվածի 8-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման, հաշվի առնելով Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի բնակիչ Լիտվա Աշոտի Մարգարյանի դիմումները (մտից N 165՝ 26.01.2021թ. և N 716՝ 05.05.2022թ.) **ո ր ո շ ու մ ե մ՝**

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2022 թվականի մայիսի 2-ի N 02052022-10-0030 վկայական) Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 15-րդ փողոցի N 15 հասցեում գտնվող 35,3 քառակուսի մետր ներքին մակերեսով ավտոտնակը (արտաքին մակերեսը՝ 37,6 քմ) և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 37,6 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած Ջերմուկ քաղաքի բնակիչ Լիտվա Աշոտի Մարգարյանին:
2. Ընդունել ի գիտություն, որ՝

1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.
   1) ավտոտնակի 1 քառակուսի մետրի համար՝ 1100 (հազար հարյուր) դրամ (տարածագնահատման 11-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0.11).
   2)առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 810 (ութ հարյուր տաս) դրամ:
4. Լիտվա Աշոտի Մարգարյանը պարտավոր է վճարել.
   1) համայնքապետարանի 900365031278 հաշվեհամարին՝41400 (քառասունմեկ հազար չորս հարյուր) դրամ՝ ավտոտնակի գինը.
   2) համայնքապետարանի 900365031625 հաշվեհամարին՝30500 (երեսուն հազար հինգ հարյուր) դրամ՝ հողամասի գինը.

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Լիտվա Աշոտի Մարգարյանի կողմից:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լիտվա Աշոտի Մարգարյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 մայիսի 5
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 մայիսի 2022թ. N 106-Ա

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ Զ. Գ. ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ և 26-րդ կետերով, հիմք ընդունելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 158-րդ հոդվածի 18-րդ մասը և 219[1]-րդ հոդվածը, ինչպես նաև՝ Վայոց ձորի մարզի դատախազի՝ Ջերմուկի համայնքի ղեկավարին ս/թ մայիսի 4-ին հասցեագրված N N 66/621-22 գրությունը՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի Գնդեվազ բնակավայրում գտնվող, անհատ ձեռնարկատեր Ալբերտ Մնացականյանին պատկանող մթերային խանութում համայնքի անչափահաս բնակիչ Արգիշտի Ջանիբեկի Խաչատրյանին ալկոհոլային խմիչք վաճառելու համար Ջերմուկի համայնքի Գնդեվազ գյուղի բնակիչ Զարուհի Գրիգորի Խաչատրյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ նշանակելով տուգանք սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

2. Պարտավորեցնել Զարուհի Գրիգորի Խաչատրյաննի ՝ սույն որոշումը ստանալուց հետո 15 օրյա ժամկետում սահմանված տուգանքը վճարելու Ջերմուկի համայնքի բյուջեի 900365031112 հաշվեհամարին՝ տեղեկացնելով, որ տուգանքը չվճարելու դեպքում այն բռնագանձվելու է դատական կարգով:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում սույն որոշման ընդունման մասին՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով Զարուհի Գրիգորի Խաչատրյանին իրազեկելու օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 մայիսի 5
Ջերմուկ